

նը մասին: Սա ստոյգ է, որ հեղինակն չունի ուարուեստով դաստիարակուած այս վեհապետը իր թատերական երկերը գրած է հետեւելով հեղինակն ողբերգութեանց: Ոչ մէկ տարակոյս, որ անոնք կը ներկայացուէին ալ: Արուեստներու սիրահար ինքնակալ մը չէր կրնար իր իսկ երկերը չբեմադրել իր մայրաքաղաքին մէջ: Բայց ինչ որ աւելի կը մեծցնէ իր թատերադերի դեր-մագձութիւնը այն է թէ իր երկերը ծանօթ էին արտասահման, եւ նոյն իսկ պահուեցան իր մահէն դարեր յետոյ ալ: Պլուտարքոս, որ կ'ապրէր 50-125, կը վկայէ, թէ իր օրով դեռ գոյութիւն ունէին Արտաւազդի երկերէն շատերը:

Արուեստի չունչով վառուած այս թագաւորը անչուշտ որ դանց չէ ըրած հայ տոհմիկ արուեստն ալ: Հայոց թագաւոր մը, որքան ալ սիրէ «հեղինակն» կոչուիլ, երբ Յունաստանէն դերասաններ կը կանչէ իր արքունիքը, անտարակոյս քաջալեր կ'ըլլար հայ տոհմիկ գուսաններուն եւ ստեղծագործութեանց, որոնք կային եւ իր օրով, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Մանաւանդ որ Արտաշէսի դահուն վրայ նստող եւ անոր իսկ ցեղէն վեհապետ մը չէր կրնար արտօժ չզրալ լսելով Արտաշէսի փառքը պատմող դիւցազններգութիւնները:

(Շարունակելի)

ՎԱԼԻ ԳԻՇԵՐ

Հեռուներէն պարիկ մ'եկաւ ու վափկօրէն,
 Հորիզոնի շափիւղագարդ ցանկապատէն,
 Վարդի մը պէս՝ վերջալոյսը թոթուեց գետին,
 Ու առուներն թերթերն անոր առին տարին...

Երկրագործի քրտնաքաթաւ դէմքով լուսինն,
 Ոսկեգիսակ ցոբեկներու խորձ մ'իբ ուսին,
 Թոյլ ու կթոտ կը բարձրանայ բլուրն ի վեր,—
 Մինչ հապշտապ չորս ծագերէն՝ խումբ խումբ
 աստղեր,

Կալի կայտառ տոցոց նման տուն կը վագեն,
 Որոնց ոտքի կ'իջնայ փռչին ծփծփալէն,
 Կը տարածուի՝ ու յամբօրէն կ'ըլլայ գիշեր...

ՎԱՀՐԱՄ ՍՕՖԵԱՆ

Ը Ն Ծ Ա Յ Ո Ւ Մ

Երբ կը խորհիմ թէ որքա՞ն դեռ ինձմէ՛ քեզի պիտի գան Արշալոյսներ՝ սըրտիս անծայր եւ անօրտում ծագերէն, որքա՞ն քննոյշ մեղեդիներ պիտի պարեն եւ որքա՞ն՝ նուրբ բըրբուումներ պիտի երգեն հոգիիդ մէջ, մեղմօրէն,

Որքա՞ն խորունկ ըզգացումներ պիտի անվե՛րջ կայծօկըլտան
 Ու հըրքիւններ պիտի ցանեն մըթուփեան մէջ անցեալին...
 Որքա՞ն մաքուր առագաստներ պիտի բացուին վերբասին
 Լոյսերուն տակ երազներու կարեւորագիւ մերկութեան...

Որքա՞ն, որքա՞ն քաղցրութիւններ պիտի բափին տակալին
 Սըրտիդ բափուր բաժակին մէջ, եւ ի՞նչ անուշ սարսուռներ
 Պիտի փայն մատներէս՝ նուրբ, վարդերանց եւ ըզգայուն

Մարմնիդ վըրայ... երակներէս, ինչպէս գինին հընձանին,

Կը պըզպըջայ, դէպի շըրքունք կը բարձրանայ ինքնաբեր կարմիր սափորն համբոյրներուն... Զայն լեցըն՝ եւ կուր Գուն...

Ա.ԶԱՏՈՒՆԻ

ԱՌԱՋԻՆ ՃԵՐՄԱԿ ՄԱՋԵՐՍ

Սափրէ՛, տղա՛ս, սա մագերը անպիտան.
 Ճերմակ թէ՛ սեւ խառնէ՛ բոլորն իրարու:
 Հնձուորն ինչպէս իր մանգաղին շեղբով լայն՝
 Կը կըտըրտէ հասկ թէ՛ որոմ, մահատու

Գործիքդ անցա՛ր անոնց խորիւ արմատէն:
 Ա՛լ չեմ ուզեր տեսնել զանոնք գլխուս վրան
 Թառած այդպէ՛ս, տատակներու իբր հիւսկէն,
 Յոյս նարակող իբրը՝ մահուան ուրուական:

Կ'իջնէ՛ պաղ մը սրտիս խորերը մինչեւ,
 Անոնց՝ շիրմէն փոխ առնուած՝ ներմակէն,
 Ծաւալելով հոն թախիծ մը մշտատեւ:

Ու՛ տակալին սեփ-սե՛ր՝ անոնց խորձերէն,
 Յիշատակներ ու սէրեր թեւ կը բանան,
 Զարնըւելու համար հասնող ծերութեան:

Սափրէ՛, տղա՛ս... Ա՛լ չտեսնեմ զանոնք ես,
 Հարթող մահուան նանապարհը ինձ այդպէ՛ս,
 Զիս քիչ առ քիչ հրող դէպի գերեզման...

ՎԱՐՈՒԺՆԱԿ